

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՌԱԿԱՆԱՑ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԹԻՒ 26



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ ՄՈՋԵԼՈՒՄ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 26 || 28 ՅՈՒՆԻՈ 1903



ՍԵՐՊԻՈՅ ԱՂԵԲՍԱՆԴԻ ԹԱԳԱՅՈՐԻ ԵՒ ՏՐԱԿԱ ԹԱԳՈՒՀԻՆ

ՎՏԱԿ ԵՒ ՓՈՔՐԻԿ ԱԼԻՍ

(ՆՄԱՆՈՂԱՐՈՐ)



Յաժ ու կանաչ թփոց տակ՝
 Մի վտակ,
 Սուրսուրալով դէպի վար
 Կը հեւա՛ր...
 Ու վէտվէտուն ջինջ յալիս՝
 Քոյլն Ալիս
 Կայնած նայեր իր զուարթ
 Իբր վարդ
 Արեւափայլ վառ դէմքին
 Ժպտագին:
 Ու ճիչ մ'ամեղ իր շրթին
 Եւ անդէն
 Թռաւ ի բաց՝ « Թէ ի՛նչպէս
 Իմ այսպէս
 Վարդ դէմքս է նկարուած
 Հոն դրուած »:

*
*

Անմեղունակ թիկունս՝ պէս
 Աննրման,
 Փոքրիկ Ալիս քալուածքով վիս՝
 Կուգար ման :
 Եւ Մայիսի սիւքերն անոյշ
 Մեղմօրէն ,
 Հրեշտակին մազերն քնքոյշ
 Կ'օրօրեն:
 Ի՛նչ աղուոր է կը տեսնե՞ս
 Սա աղջիկ
 Ըսին, կինե՛ր սեւերես ,
 Բարբաիկ .
 Այք էր դպէր մանկիկին .
 (Սուտ չէ այդ),
 Ձի մեղու մը դառնագին
 Տուաւ խայթ
 Հէք Ալիսի վառ դէմքին:
 Իրիկուն էր, շիփ-շիտակ
 Դէպ ի վտակ
 Դնաց լուալ իր այտեր
 Եւ աչքեր
 Որ լեցուած էր արտասուք:
 Զայն տեսնելով չար վտակ
 Իբր կատակ
 Ըսաւ հեզնելով. « Ե՞ս ընդէր
 Եմ մտեր
 Աչացդ մէջ, սի՞րելիս,
 Ո՛վ Ալիս »:

Սամսոն

ԱՐԱՄ ԱՅԳՈՒՆԻ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

25.— Չարախօսին լեզուն սոսկալի զենք մըն է

Պզտիկ աղջիկ, հսկէ խօսքերուդ վրայ: Շատ անգամ առանց չարութեան աջ ու ձախ կը պատմես ինչ որ գետես աննպաստ պատմութիւններ բարեկամներուդ կամ ընտանիք ծանօթներուն վրայ: Դու անոնց չարիք հասցնելու դիտաւորութիւն չունէիր, բայց այդպէսով կ'ընէիր, որովհետեւ անոնց վրայ եղած վատահոլութիւնը, համարումը կորսնցնել կուտաս, դու կ'արգիլես զանոնք բարեկամ ունենալու, անոնց թշնամիները կը քաջալերես, անոնց կ'օգնես, որոնք շատ կ'ուրախանան անոնց վրայանհաճոյ բաներ լսելով:

Գու ճանչցած մարդիկներու իրական պակասութիւնները և ճշմարիտ սխալները ամէն տեղ քիչ մը պատմելով, սուտ չես խօսիր, միայն ճշմարտութիւնը կ'ըսես, բայց այս անհաճոյ ճշմարտութիւն է և փնասկար անոնց, որոց վրայ կը խօսիս: Դու չարախօսութիւն կ'ընես, չարախօս ես:

Չարախօս մի՛ ըլլար: Բեզ հաճելի թող չթուի ուրիշներու պակասութիւնն ուրիշներու պատմել: Ճշմարիտ մարդասիրութիւնը քեզ կը պատուիրէ քու մօտաւորներուն նկատմամբ լռութիւն պահել: Դուն ալ առանց պակասութեան չես: Ինչպէս որ կ'ուզես ուրիշները վարուիմ եք հետ, դուն ալ այնպէս վարուէ:

26.— Չարախօսութեամբ եղած չարիքը գրեթէ միշտ անուղղելի է

Սպասուհի մը, իր տաններկու տարեկան հասակէն ծառայութեան մտած էր. այդ տարիքին մէջ գտնուած տանը մէջ փոքրիկ գողութիւն մը ընելու դժբախտութիւնն ունեցաւ: Բանը երեւան ելեր էր, բայց փոքր աղջիկը այնպէս զզջացեր էր, որ տիկինը չէր արձակէր Բայց այն տիկինը քաղաքէն երթալով, սպասուհին ստիպուել էր ուրիշ գործ մը փնտռել: Սակայն ինք անխոհմտաբար շատ տարի առաջ բրած այդ պակասութիւնը պատմած էր և չար չատախօս ծառայ մը ամէն տեղ կրկներ էր: Անկէ կը կասկածէին, թէպէտ և շատ տարիներէ ի վեր հաւատարմութեան և բարի վարքի օրինակ տուած էր: Օր մը աներեւթացաւ և գիւղին մէջ լուր տարածուեցաւ, թէ արտասահման գնա-

ցեր է այս անուանարկութենէն ազատելու համար և թէ հոն մեռած է նեղութեան և թշուառութեան մէջ:

Կը տեսնէ՞ք, թէ չարախօսութիւնը որչափ վտանգաւոր բան է: Նախ, անգամ մը ճշմարտութիւնը ըսելէ ետք կարելի չէ փոխել: Երկրորդ, այնպէս խօսելով չեն խորհիր թէ կրնայ այն անձը զղջալ, որուն պակասութիւններու գաղտնիքը երեւան հանած են, Ան կրնայ բարւոքիլ, լաւ զգացումներ ունենալ, բարի և պատուաւոր լինել: Չարախօսութեամբ երեւան հանել այն գաղտնիքը, որուն համար ինքզինքը կը մեղադրէր՝ զղջալն անօգուտ դարձնել է:

Չարախօսութիւնը բամբասանք աւելի գեռ է:

27. — Ի՞նչպէս կը լինին չարախօս եւ ի՞նչպէս չեն լինիր

Չարախօս կը դառնան, երբ իրենց թոյլ կուտան ուրիշին վերայ աւելորդ չարախօսութիւն ընել, հաճոյք ողորդել ուրիշին ըրած գործովը դրաղիլ, հետաքրքրուիլ. թէ ի՞նչ կ'ըսեն դրացիները, ուղեւոր հասկնալ անոնց գործերը, նոյն խօսքէ բան մը չըսեն, անոնց գործերէն կը դատեն, մինչեւ անգամ եթէ կատարելապէս չեն ճանչնար զանոնք: Հետաքրքիր եւ շատախօս լինելը կ'առաջնորդէ չարախօսութեան, որովհետեւ ուրիշին վրայ հազարաւոր աննշան բաներ ըսելով, վերջապէս կը հասնին խորհրդածութիւններ, ակնարկութիւններ ընել, որ կրնայ անոնց կորստաբեր լինել:

Կուզէ՞ք սովորութեամբ չարախօս չլինիլ: Ձեռքներդ երբեք բացակայութեան անոնց վրայ գեռ մի՛ խօսիք: Ձեզի չվերաբերած բաներով մի՛ զբաղիք, ինչպէս կ'ըսեն հառարակօրէն: Եթէ մէկը ձեր առջեւն ուրիշի վրայ չարախօսէ, ճարպիկութեամբ մը խօսակցութիւնը փոխեցէք: Աւելի շանեկան բաներ կան խօսելու քան ծանօթներու վրայ գեռ խօսիլը:

28. — Անեղապահ մի՛ լինիր

Կը կարծուի թէ անճշդապահութիւնը մեծ պակասութիւն մը չէ, բայց եւ այնպէս անճշդապահութիւնը միշտ մէկուն ֆլաւ կը հասցնէ, հետեւաբար արդարութեան դէմ պակասութիւն մըն է, եթէ յիմարութիւն մը չէ, որ մարդ ինք իր դէմ կը գործէ:

Գործաւոր մը խոստացաւ այն ինչ գործը այն ինչ ժամին աւարտել: Կ'սպասէին, անոր համար կարգադրութիւններ ըրին: Գործաւորը նշանակեալ ժամանակէն շատ ժամեր ետք կը վերջա-

ցընէ: Այնպիսի պակասութիւն մը գործեց, որուն հետեւանքը կրնար ծանրակշիռ ըլլալ:

Վաճառական մը խոստացաւ այս ինչ օրուան համար այն ինչ ապրանքն ունենալ, որ չունէր: Յաճախորդը կը յետաձգէր իր գնումը, որոշեալ ժամին չունենար ուզած այն ապրանքը: Ահա անոր համար մեծ տհաճութիւն մը եւ թերեւս մեծ կորուստ մը:

Շրջագայութիւն մը պիտի ընեն, այն ինչ օրուան համար, այն ինչ ժամուն, այն ինչ տեղ ժամագիր եղած են: Հրաւիրեալներէն մէկը որոշեալ ժամին չգար: Անոր կ'սպասեն: Ժամանակը կ'անցնի, կառախումբը կը մեկնի, չեն կրնար անկէ օգտուիլ: Վերջապէս ուշացող հրաւիրեալը կուգայ. լայց ծրագիրը խանգարուած է. շրջագայութիւնը կատարուած չէ, անոր պատճառաւ ամէն մարդ անոր անձը պակասութեան պատճառած ծանձրութիւնը կը կրէ:

Նդի՛ր ներպապահ, խորհի՛ քեզ սպասողներուն վրայ, որոնք քու վրայ վստահ կ'սպասեն շրջագայութիւն մը ընելու համար:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ԲԱՐՈՅԱՎԷՊ

ՇՐՋԱԳԱՅԵՑ ԹՈՂՈՒՆԸ

(Շարունակութիւն 25րդ թիւէն եւ վերջ)

Շատ չանցած, թռչունը մեծցաւ, գիրցաւ, և դաշտերուն մէջ մեր գտած այն նիհար ու մերկ ձագուկը՝ երկնագոյն թեւերով. դեղին փորով ու կապուտակ բթուկով շատ սիրուն թռչուն մը եղաւ: «Սեւագլխիկ»ը... երգելով կը թռչկոտէր, անդադար կը ցատկրտէր և կարծես բուն անունին կոչումը աղերսելու համար սկսած էր դայլայլել:

Թռչունին այս վիճակը տեսնելով կ'ըսէի Ֆանիին. — Այլեւս արձակելու ենք այս անասնիկը, որովհետեւ եթէ չթողունք՝ զայն բանտարկելու համար ազատած կ'ըլլանք:

Ասո՛ր վրայ, Ֆանի սկսաւ ըլլալ: Սակայն՝ խղճով՝ չկրցաւ հանդուրժել թռչունին արգելափակումին պատճառ դառնալուն, ուստի զայն արձակելու համար երկուքս ալ պարտէզ ելանք:

Օղբ գեղեցիկ ու վճիտ էր, և փայլուն արեւն իր ջերմութեամբը ամպեր կը ձեւացնէր երկնքի անջրպետին մէջ...

Ծառերն անհամար պտուղներու ծանրութեան տակ կ'քած էին և պարտէզին ծաղկանոցները բուրումնաւէտ արտաշնչումներու

հրապոյրովը լեցուն էին: Փանի, բնական այս գեղեցիկութիւնները տեսնելով՝ ձեռքի թռչունին վրայ ակնարկ մը դարձուց և մրմնջեց.

— Ասերա՛խտը, մեզ չո՛ւտ պիտի մոռնայ: Ու քիչ մը համբուրելէ և ողջագուրելէ վերջ՝ արձակեց զայն:

Թռչունը սրացաւ օդին խաւերուն մէջ, փողփողուն ընթացքով մը կտրելով տարածութիւնը, մօտակայ ծառերէ մէկուն ճիւղին վրայ թառեցաւ, և արձակուելուն համար բերկրանք ու ցընծութիւն յայտնելու ձեւով՝ երգել սկսաւ...

Փանի, չա՛տ տխուր վիճակի մը մէջ, կեցաւ այն ծառն տակ ուր թռչունը կը գեղգեղէր, և կարօտագին նայուածքը վեր յառեց. անոր սրտագրաւ դայւայլիկները կը հմայէին զինքը: Եւ այս միջոցին, իղձերուն և զգացումներուն սաստկութեան ենթարկուած՝ ձեռնուայն աղջիկը յանկարծ թևերը ուղղակի թռչունին երկարելով՝ «Պիլուէ՛թ, Պիլուէ՛թ» աղաղակել սկսաւ: Այս ծանօթ ձայնը լսելուն պէս, թռչունը ծառէն իջաւ և տիրուհւոյն ուսին թառեցաւ: Ասոր վրայ, Փանի կրկնապէս ուրախ ու երջանիկ կը զգար ինքզինքը:

Փանի անդադար թռչունին հետ կը սիրուըտէր և հրեշտակներու յատուկ իր ձայնովը կը խօսակցէր. իսկ թռչունը շարունակ երգելով դեռատի աղջկան երեսին թափող ուրախութեան արցունքները կը սրբէր մետաքսային թելիկներովը: Փանի կատարեալ երջանկութեամբ աուցուն՝ ըսաւ ինծի.

— Կը տեսնե՞ս, այլևս թռչունը զմեզ չպիտի ձգէ »:

Տղան այս պատմութիւնը լրացնելէ ետքը, անցեալի յիշատակներուն հարուածող աղդեցութեան տակ՝ պահ մը լուռ մնաց, և ձեռքերը տանելով ընկերոջը տխրահայեաց աչքերուն, նորէն շարունակեց.

«Այս վայրկեանէն սկսելով, Փանիին ու թռչունին միջեւ մանկունակ բարեկամութիւն մը հաստատուեցաւ... Թռչունը բնա՛ւ չէր թողուր իր բարերարուհին... ո՛ւր որ երթար անիկա ալ քովէն կը պտտէր: Անոր ձայնը, ոտքի ազմուկն իսկ կը ճանչնար: Մինչեւ իսկ Փանիին մէկ կոչը բաւական էր՝ թռչունը պարտէզին խորերէն բերելու համար, թռչունն ամէն առտու, հոգեցունց ճռուողիւններովը կ'արթնցնէր նորատի տիրուհին, և մինչեւ փետրաբարձին գլուխը հասնելով՝ անոր վարդազոյն տոտիկները կը կոցէր, կ'երթար, կուգար... Մէկ խօսքով, ցնծութեան ծաղիկներ կը սփռէր բարերարուհւոյն շուրջը...»

Ինէ և մայրիկէս առաջ, այս երջանիկ թռչունն էր որ քոյրս կը համբուրէր

Ժամանակէ մը ի վեր օգերը ցրտանալովսկսեցին ըլլալնուն, այլևս ամառանոցէն Բարիդ դառնալնիս հարկ եղաւ: Քոյրս՝ Նիհար ու տկար կ'երեւէր և ճարտար բժիշկներու դարմանումին կարօտ: Բարիդ գալէ ետքն անոր հիւանդութիւնը սաստկացաւ, և քիչ վերջը սենեակէն դուրս ելնելու անկարող եղաւ: Սպասուհիներուն՝ շատ անգամ ցած ձայնով խօսակցիլը և խիստ յուսահատական կարծիքներ փոխանակելնին կ'իմանայի, նոյնպէս մայրիկիս ալ մենէ գաղտուկ արտասուելը: Սակայն, մահուան ինչ ըլլալը չգիտնալու երբեք հոգ չէի ընէր...: Թռչունը տիրուհիէն բնաւ չէր զատուէր և եթէ վայրկեան մը իսկ հեռանար՝ Գանիի տառապանքը կ'աւելնար...: Եւ անկեղծ սրտի տէր այս մանկուհին, ենթարկուած ցաւերն ու չարչարանքները անբաժան ընկերն եղող Թռչունին պատմելով ժամանակ կ'անցնէր: Քանի՞ անգամ-



ներ երբ իր եռանիւ կառքին մէջ նստած, գինքը պարտէզը շրջապելու կը տանէի, տեսայ որ այս սիրելի Թռչունը և իրեն նման քանի մը հոտեր ալ Գանիի սպիտակ ձեռքերուն վրայ թառելով՝ անոր բողոքներն ու պատմութիւնները մտիկ կ'ընէին: Տիրուհւոյն հիւանդ և անկողնոյ գերի՝ միացած միջոցներուն, Թռչունն իր զուարթ աշխուժութիւնը բոլորովին կորսնցուց: Բընաւ չէր երգէր կամ թևաբախէր: Իր տառապանքներուն մասին

հիւանդին ըրած պատմութիւնները կարծես հասկցած՝ յոյժ վըշտահար վիճակի մէջ կը գտնուէր և ատեն ատեն կապուտակ ու գեղեցիկ գլուխն ուղղակի երկարելով զայն միտքարելու կ'աշխատէր:

Օր մը, քրոջս հետ առանձին՝ սենեակին մէջ կը գտնուէի:



Քնացած կը կարծէի զայն: Բայց յանկարծ չտկար ձայնով մը զիս կանչեց—«Մնաս բարո՛վ, եղբայրս, մնաս բարո՛վ, ահա ես^ս հոգիս կ'աւանդեմ, մայրիկս կ'ուզեմ...»: Ես զինքը հանդարտեցնել ջանացած միջոցիս, «Զիս գրկէ՛» ըսելով կրկին աղաղակեց, և գըրկելու համար հագիւ քովը հասած էի, երկու ձեռքերով զիս

գրկեց, ու համբուրելէ յետոյ գլուխը բարձին վնայ իյնալը տեսայ: Դժբաղդ քոյրս մեռած էր:

Այս սիրելի հրեշտակին անհետացումը զիս չափազանց յուզած ու թշուառացուցած ըլլալուն՝ սկսայ ողբալ բարձրաձայն: Այն ատեն, հիւանդին գլխուն վերեւ քնացած թռչունն ալ, սուգի յայտնութիւն մը ընելու նման՝ յուզիչ ձայնով մը բաց պատուհաններէ մէկէն ելնելով գնաց, կարծես այն մատղշուկին հոգին ալ թռչունին կապուտակ թեւերուն վրայ՝ ուղղակի երկինք սլացաւ:

Տղան, բոլոր ասոնք արտակարգ աւիւնով մը խօսելէ վերջը, ցոյց տուաւ մեր քով կեցող ծերունի խնամակալը որուն աչքերը պատմութեան առթած յուզումէն թրջած էին:

— Բրոջս մահէն յետոյ ինչե՞ր քաշելս և որչափ ատեն հիւանդ մնալս ինք թող խօսի:— Եւ ասով թէ և ուղեց պատմութիւնը վերջացնել, սակայն ես հարցունցի:

— Թռչունին ի՞նչ ըլլալը չէ՞ք գիտեր. և կարելի՞ է որ այս մասին ալ ծանօթութիւն մը տաք: Տղան խնդիրս չը մերժելով՝ խօսիլ սկսաւ:

— Ժամանակ մը հիւանդ մնալէ և աշխարհ գլխուս մուծ քառս մը դառնալէ յետոյ, առողջութիւնս և ուժս վերստանալուս պէս՝ սիրելի քրոջս գերեզմանին այցելեցի: Գերեզմանի ցուրտ մարմարին վրայ ծնրադրելով այն հրեշտակին համար աղօթած ատենս՝ ականջիս հասնող թռչունի ձայն մը ուշադրութիւնս գրաւեց... Գլուխս վերցուցի: Ուղղաբերձ ծառի մը վրայ՝ «Սեւագլխիկ» թռչուն մը տեսայ՝ որ կ'երգէր: Զայն ճանչնալուս՝ յուզումս աւելցաւ... Ես՝ ալ՝ դժբաղդ քրոջս ըրածին նման «Պիլուէ՛թ, Պիլուէ՛թ» ըսելով կանչեցի: Գեղեցիկ թռչունն, անունը լսելուն պէս՝ եկաւ ձեռքերուս վրայ թառեցաւ: Թռչունին այս ըրածը սրտագին անձկութիւնս ու վշտակրութիւնս աւելցուց ու նորոգեց, և սկսայ թէ՛ լալ թէ՛ սիրական թռչունը ողջագորել: Սա հինգ տաս րոպէ ձեռքերուս վրայ կենալէ յետոյ, դարձեալ տիրուհւոյն մահն հասկնալ ուզած ըլլալու պէս, գերեզմանին վրայ դրուած ու նարնջածաղիկներէ և անմեռուկներէ կազմուած պսակներուն մէջ պահուըտեցաւ:

«Ամէն անգամ, գերեզմաննոց այցելելուն, այս սիրական թռչունը հո՛ն կը տեսնէի: Յերեկները՝ ցաւագին ձայնով՝ գերեզմանին վրայ կ'երգէր: Գիշերներն ալ, գերեզմանին շուրջը զարդարող ծաղիկներուն մէջտեղ, լռիկ իր բոյնը կը քաշուէր:

«Քանի մը օր առաջ, եղանակին սաստկութենէն, այս անոք անասնիկը մեռած գտանք հոն՝ ուր կը տառապէր: Երախտագէտ

Թռչունն իր կենդանութեան յետին վայրկեանն իսկ տիրուհին
թողել չէր ուզած...»

Պատմութեան շարունակուելու միջոցին, Աստիլլեցի կամուր-



ջին վանդակորմերուն մօտեցած ըլլալնուս՝ տղան ըսաւ ինծի
Թախծագին ծայնով մը:

— Հիմա հասկցա՞ք թէ՛ ինչո՞ւ կը սիրեմ Թռչունները:

Ու խնամակալին հետ միասին՝ իրենց ոպասող կառքը նստե-
լով մեկնեցաւ:

Թրգմ. Լ. ՍՐԱՊԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Լաւ է այս աւուր ընկոյզը՝
Քան թէ վաղուին խարբուզը,
Այս աւուր հաւու ծագը՝
Քան թէ վաղուի գէր սագը:

Հող ու մոխիր կեր ա՛ տըղայ,
Տըղամարդէն հաց մի՛ մուրար-
Օր կուզայ որ ճակտիդ կուտայ,
Ծանըր կուզայ քեզ քան ըզբար:

Գ Պ Ր Ո Յ Ը

Ծորակ մ'է ան ուրկէ հոսին ուսում, լոյս՝
Որք զան մարդուն հաւատք, կրօնք, սէր եւ յոյս .

Ան է մարդուն պատուանդանը բարձրութեան
Եւ օրորոցն վեհ զգացմանց մաղրկութեան :

Բարոյական սուրբ աւագան մանուկին,
Ուր մաքրութիւն, ազնուական սիրտն, հոգին .
Բարին, վրսեմն ու ճշմարիտն միացեալ՝
Իմաստութեամբ կ'ընեն միտքն առլցեալ :

Տգիտութեան ախոյեանն է փրկարար,
Զինք սիրողին միակ պաշտպան բարեբար .
Բարոյական լաստափայտ սուրբ օրհասին,
Որուն փարոզն նաւահանգիստ կը հասնին :

Օրհնեալ արգանդ, յարկ պաշտելի, սուրբ ճանար,
Առանց եղի ո՛չ չաղանդ կայ, ո՛չ հանճար,
Մարդ եղ պարտի այնքան արուեստ, զարգացում՝
Որոնցմով զաւանդէն պէտքի գոհացում :

Մարդը տեսնել ուսմամբ օժտեալ, փառք անբաւ,
Եւ բաղդատել ներհակին հետ բա՛ւ է բաւ .

— Առաջինը շնորհ ու փառք է մարդկութեան,
Իսկ վերջինը՝ պատիժ, չարիք հանրութեան :

Դպրոցով են, այո՛, հաւատք ու կրօնք ու բարք,
Զարգումն մտքի, խոհուն նակատք գտնեն փառք :

Հայրե՛ր, մայրե՛ր, դպրոցն քեզ բարեկարգ,
Հոնեն միայն կրնանք ստանալ վարք ու բարք :

Ի՞նչ աւելի է պիտանի բան դպրոցը,
Ա՛լ հերիք է որքան խաղցինք մենք փողոցը .
Կ'ուզենք սովորիլ ուսում, ըլլալ հեզ, բարի,
Հեռու ապրիլ զգեսներէն. գործիք ըլլալ վաս չարին :

Վարժարանն է Կենաց ջուրն այս աշխարհին,
Կամ լուսացայտ փարոս մ'ազգաց նոր ու հին .

Սեւցած հոգը, մանկանց մտքի խաչահան
Թո՛ղ արտաքուստ փարիսեցի սասանան :

ԾՈՎՈՒ ՅՐԵՇՆԵՐ

(Շարունակութիւն 25րդ Թիւէն եւ վերջ)

Այդ օրուան անցուցած վտանգը իբր թէ բաւական չըլլար, Պրն. Ֆիզօն նաւակը մտաւ արկածին տեղը ցուցնելու համար: Տակաւին ջուրերը ցած ըլլալուն հարկ եղաւ բաւական երկար շրջան մը ընել. երբ հասան կարկառներուն մէջէն բացուած սանդուղին դիմացը՝ դիակը չէր տեսնուէր՝ մակընթացութիւնը զայն ծածկած էր: Նաւակին մէջ գտնուող չորս մարդիկը, — երկու գործաւորներ, նաւավարը եւ Պրն. Ֆիզօն, — սկսան ջուրին յատակը գննել: Առաջ բան մը չտեսան, բայց կամաց կամաց սկսան նըշմարել ճիւղներէն մին որ դէպ ի ծովուն բացերը կ'երթար ինքն իր վրայ դառնալով՝ նման օդապարիկի գունդի մը: Նոյն պահուն երկար կաշիէ երիզներ սկսան երերտակալ և կենդանիներէ երեքը կարելի եղաւ նշմարել՝ որոնք անշուշտ դիակին մնացորդը կը լափէին:

Այն ատեն չորս հոգիները, սաստիկ գրգռուած՝ թեւճակներով ջուրը ծեծեցին՝ կրցածնուն չափ պոռչտալով: Պահ մը կանգ առին տեսնելու թէ ի՛նչ կ'անցնի կը դառնայ: Ծովուն յատակը՝ խոտերուն մէջ ճիւղային աչքեր կը բացուէին:

— Զգուելի կենդանիներ, գոչեց նաւակը գտնուողներէն մին. տասներկուքի չափ կան:

Եւ այդ հրէշները սկսան դէպ ի ջուրին երեսը բարձրանալ: Նախ աչքերը միայն կարելի էր նշմարել. կամաց կամաց թեւերը տեսնուեցաւ, յետոյ՝ կենդանիները մեծնալ սկսան մինչեւ որ ամբողջ ծովին յատակը ծածկուեցաւ դիտողներուն աչքին:

Կենդանիներէն մին՝ նաւակին քովը եկաւ երեք թեւերովը անոր կառչեցաւ և միւս չորս թեւերն ալ մէջը երկնցնել ջանաց՝ կարծես զայն ընկղմելու համար: Պրն. Ֆիզօն անմիջապէս կեռ մը առաւ և բոլոր ուժովը սկսաւ զարնել կակուղ թեւերուն վրայ և յաջողեցաւ ալ զանոնք քաշել տալ: Նաւավարն ալ միւս կողմէն նման յարձակում մը վանեց թեւճակի հարուածներով:

— Փախչի՛նք, ազատի՛նք, ըսաւ Պրն. Ֆիզօն դողդոջուն:

Եւ ղեկին գլուխը անցաւ, նաւավարն ու գործաւորներէն մին թեւճակները առին. միւս գործաւորը՝ կեռ մը ձեռքը ոտքի կե-

ցաւ նաւակին ծայրը՝ դարնելու համար նաւակին պլլուող թեւերուն։ Բայց պարապ տեղը . հազիւ թեւեակները ջուրին երեսին դպած, թխորակ, նուրբ ու ոլորուն տեսակ մը լարեր անոնց փաթտուեցան, զեկին կառչեցան ու նաւակին կողերն ի վեր սահեցան։ Թիավարողները քաշել ուղեցին թեւեակները, բայց անկարելի եղաւ։

Նաւաստին իր թեւակը Պրն. Ֆիզօնի բռնել տուաւ և գրպանէն խոշոր դանակ մը հանելով սկսաւ անոր վրայ գալարուող կենդանիին թեւերը կտրտել։ Պրն. Ֆիզօն պահ մը ականարկը ծովուն բացերը պտտցուց... Հազիւ յիսուն մէդր անդին խոշոր նաւակ մը դէպ ի իրենց կուգար. երեք կին եւ պզտիկ տղայ մը կը գտնուէր մէջը. նաւավար մը կը թիավարէր եւ երկրորդ մը զեկին գլուխը անցած վտանգուած նաւակին ձայն կուտար։

Պահ մը Պրն. Ֆիզօն մտածեց զանոնք օգնութեան կանչել, բայց անմիջապէս կիներն ու պզտիկը միտքը ինկան. ձեռքի թեւակը թողուց եւ երկու բազուկները մոլեգին շարժումով մը ձօճելով պօռաց, երկրորդ նաւակին մէջ գտնուողներուն որ Ասուծոյ սիրուն այդ կողմերէն հեռանան։

Նոյն պահուն Հիլի (նաւաստիին անունն է) արձակած սոսկալի մէկ աղաղակը նախկին թէյավաճառը ինքզինքին բերաւ։ Անմիջապէս ասդին դարձաւ եւ տեսաւ թշուառ նաւավարը որ ամբողջ մարմնովը նստարանին կառչած, դէմքը սոսկումէն ջղածիք, ազատել կը ջանար ալ բազուկը որ ջուրէն դուրս՝ բռնուած էր ճիւղներուն թեւերուն մէջ։ Երկու գործաւորները թեւեակներով ու կեռերով կրցած ուժովն ին կը զարնէին այդ կենդանի փոկերուն վրայ։

Հիլ որ յուժկու և զօրաւոր էր, վերջին ճիգ մը ըրաւ, քաշեց ջուրէն վեր թեւը որու կառչած էր սեւ ու պիւրկ հանգոյց մը։ Նաւակը ձռեցաւ եւ ջուրը սկսաւ ներս մտնել. Հիլ նորէն վար ինկաւ կէս մէջքէն դուրս կախուած. ուրիշ թեւեր փաթտուեցան վզին, իրանին շուրջը և... նաւակը սոսկալի տատանում մը կրեց, Հիլ աներկույթ եղաւ։

Այս տագնապալի պայքարը՝ նաւակը դէպի եզերքները քշած էր. վայրկեան մը Պրն. Ֆիզօն պաղարիւնը գտնելով տեսաւ որ հազիւ քանի մը գրկաչափ հեռուէն կ'սկսէր ժայռէ ճամբայ մը որ դէպի կարկառները կը յառաջանար։ Գերագոյն ճիգով մը թեւեակ մը առաւ, նաւակը դէպի հոն մղեց եւ անմիջապէս վրան ցատքեց։ Երկու գործաւորները իրեն հետեւեցան. ինք փախուստ մը սկսաւ, ցից ժայռերու վրայներէն ցատկելով, սահելով, իյնալով, շրջելով։

Ազատած էին: Պրն. Ֆիգոն ետին դարձաւ անգամ մը, հրէշները, Հիւ, ամէն բան տներեւոյթ եղած էին: Երկու պարապ նաւակներ հանդարտիկ կը ծփային ջուրին երեսը. նախկին թէյ-յալաճառը յիշեց երեք կիներ պարունակող նաւակը որու արդէն ինք իմաց տուած էր վտանգը:

* * *

Ո՞րկէ կուգային այդ ճիւղները ծովեզերքներու. միայ եւ ի՞նչու համար: Հիմարի, նշանաւոր գիտունը, որ այս կենդանիները ուսումնասիրած է, հետեւեալ պատճառը ցոյց կուտայ: Ընկղմած նաւու մը ճամբորդներու գիականները Հաբլոթէթիսի խումբի մը մէջ իյնալով, այս սոսկալի արարածները մարդու մահ համը առին և շատ ախորժելի գտան, այդ համեղ որսը իրենց եկած կողմը ուղղուեցան և կամաց կամաց ծովեզերք հասան: Անշուշտ այս պատճառը ընդունելի չէ. քանի որ այդ օրուրնէ ետքը ոոյն կենդանիները գացին կորսուեցան այն անդունդին մէջ ուրկէ ելած էին. և չենք կրնար ըսել թէ տառ-տառանհինգ մարդու մարմինը ճաշակելով ախորժակնին յագեցաւ:

Սոյն դէպքը պատահած գիշերը հինգ շոգենաւներ ծովեզերքը պահպանեցին նոր արկածի մը անդի շտալու համար: Կ'ը գիշերին ծովեզերքէն երկու մղոն հեռու նաւակի մը մէջ վայնասուն մը փրթաւ. լապտեր մը տարօրինակ կերպով կը տատանէր. անմիջապէս պահակ շոգենաւները անոր մօտ փութացին. տեսարանը տարօրինակ էր. բոլոր կենդանիները խումբ մը կազմած, ճիւղներու պէս յողալով դէպի ծովուն բացերը կ'երթային...

Ա՛յ անկէ ետքը հատ մը չտեսնուեցաւ Սիտմութի ծովեզերքուն վրայ: Հրէշները իրենց պատճառած աւերն ու տուած սարսափը բաւ համարելով կը հեռանային:

Հ. - Կ. ՈՒԵԼՍ

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Հպարտութիւնովդ գոռողացած, գիտութեանդ վրայ ուռած, դուն ուրիշներուն վրայ արհամարհանօք կը նայիս: Նման ես ան տղուն, որ ձիւնի դէզի մը վրայ գոռողաբար նստած՝ կը պարծենայ իր ելած բարձրութեանը վրայ: Արեւն իր ճառագայթները կը զարնէ, ձիւնը կը հալի և պզտիկ հպարտը կ'իյնայ տիզմի մէջ: — Ծաղը ընող մարդուն գլուխը միշտ փոթորիկներ կը փրթոին և մեծախօսը միշտ թշնամիներ կ'ունենայ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԵՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՅ

Տեֆարդ. — 1596 ինՊելճիգայի Լահէյ քաղաքին մէջ կը ծնի արդի իմաստասէրներուն պապը. Տեֆարդ եւ 54 տարիներու խորախորհուրդ շրջան մը բոլորելէն վերջ ծանրախոհ գլուխը իր հանգիստը կը գտնէ Սթոքոլմի հողին մէջ. Տեֆարդ իր իմաստասիրական սկզբունքներովը ազդած է կրթական աշխարհին մէջ ալ. հոգեպաշտ դպրոցին այս պետը իր փիլիսոփայական քայլերը ապէս կ'առնէր. Նախ՝ պարտինք տարակուսիլ ամէն բանի վրայ, մինչև իսկ մաթեմատիքի եւ երկրաչափութեան՝ որոնց ստուգութիւնը ճշգրիտ չափ յայտնի է. եւ այս տարակոյսն է յառաջդիմութեան եւ գիտութեան նախաքայլը, քանզի մինչեւ որ մեր ունեցած մէկ բանին վրայ չերկբայինք, անոր հաստատութեանն ու պարզութեանը համար միջոցներ եւ լոյսեր չենք փնտռեր. և ահա այս փնտառուքը կենդանութեան եւ զարգացման առաջին պայմանն է:

Երկրորդ քայլն էր թէ երբ ամէն ինչ տարակուսանքի կրնանք ենթարկել, մեր եւր այս ենթարկումէն բացարձակապէս դուրս կ'իյնայ. «կը խորհիմ եւ ուստի կամ», այս կտրուկ նախադասութիւնը, հիմը կը սեպէր բոլոր իմաստասիրութիւններու եւ գիտութիւններու. և որով կը տեսնենք թէ ինչպէս իր հոգեպաշտ դպրոցին գաղափարները կը ներշնչէր:

Երրորդ քայլն էր թէ խորհուրդէն ի զատ ուրիշ ամէն բան մեզմէ դուրս է, մեզի չի վերաբերիր. բայց խոհն ու մտածմունք ներածին՝ եւ բուն իսկ մեր եւր կազմող տարրերն են. Միտքը՝ միջոցի կարօտ չէ ինքզինքը ըմբռնելու կամ յայտնելու. Զգայարանքները գործ չունին այս դերին մէջ.

Չորրորդ քայլն էր թէ ստուգութեան տիեզերական կանոնը կամ փորձաքարը արդիւնքն է երկրորդ քայլին. այսինքն «կը խորհիմ եւ ուստի կամ», կը խորհի եւ ուստի կայ, որմէ կը հետեւի թէ ինչ որ եսս կը խորհի, ան կայ. Սակայն ստուգութեան այս կանոնը՝ միայն ճշմարտութեան գոյութիւնը կ'ապացուցանէ եւ չէ թէ անոր նկատմամբ գիտութիւն մը կուտայ. Բանի մը գոյութիւնը ըմբռնել եւ անոր նկատմամբ գիտութիւն ունենալ՝ տարբեր բաներ են. Զորօրինակ, մեր բարեկամներէն շատերը ծանօթ են բայց չենք գիտեր զանոնք. անոնց գոյութեան տարակոյս չունինք բայց ինչութիւննին ծածկուած կրնայ ըլլալ. Այս-

պէս նաեւ հաղարաւոր տեղիքներ որոնք կ'ապացուցանեն թէ բանի մը գոյութիւնը մեզի համար ստոյգ՝ բայց ինչութիւնը որ գիտութիւնն է գաղտնի կրնայ մնալ: Տեքարդ այս տրամաբանութեամբ յառաջ կ'երթայ եւ կ'ըսէ Աստուծոյ գոյութիւնը ստոյգ է, քանզի եսս կը տեսնէ թէ նստուած կայ, ու այս գաղափարը՝ Աստուած՝ ինք դրած է իմ մէջս: Անհունի եւ հունաւորի վրայ խօսած ատեն կ'ըսէ թէ՝ Անհունը աւելի իրականութիւն ունի քան հունաւորը. եւ ուստի առաջինին գաղափարը նախադոյ է երկրորդէն: Անոնք որ մտքերնին նախապաշարունմներով լեցուցած ու կուրացուցած են, չեն կրնար տեսնել իրենց մէջ այս գաղափարը:

Մեր մէջ խարող ազդակ չիկայ: Ամենէն անկեղծ զօրութիւնը միտքն է եւ ուստի անոր անկեղծութեան յենով կրնանք փարատել տարակոյսի բոլոր ամպերը:

Տեքարդ՝ հոգի եւ մարմին իրարմէ անկախ կ'ըմբռնէր. առնց միացումը՝ մեքենական է կ'ըսէր: Աստուած հոգէն չինած է մարմինը իբր ինքնաշարժ մեքենայ մը, որուն մէջ հոգիին գահակալութիւնը եւ յառաջացումը փոփոխութիւն մը չեն ըներ անոր վրայ. երբեմն սոսկ յաւելուածակտն շարժումներ կուտան:

Ներաբնակ խորհուրդն է որ մարդս սերիչ կենդանիներէ կը զանաղանէ: Անասունները այդ խորհուրդը չունին և ուստի լոկ ինքնաշարժ մեքենաներ են: Տեքարդ՝ իր այս իմաստասիրութեամբ ուսանողներու բարոյա-կրօնական գաղափարները շարժեց, ողբելոյսեց, ուղղեց եւ Աստուծոյ հետ կապեց յայտարարելով թէ մենք Անկէ կախում ունինք: Մարմինի եւ հոգիի վրայ զարկած սուտնձինն չեշտերը՝ պատճառներ եղան նիւթական եւ բարոյական անկախ զարգացումներու: Աստուծոյ գաղափարին բնադոյութիւնը՝ ալ աւելի ամրապնդեց ուսանողներու հաւատքները, և հաստատեց հունաւորին անխուսափելի կախումը՝ Անհունէն. ահա ասով կրօնի ճշմարիտ հիմերը դրաւ սերտող սերունդին մէջ: Ասոնք՝ Տեքարդին բարոյա-կրօնական ազդեցութիւններն էին որոնք դաստիարակութեան մէջ յերեւան եկան:

Գալով գիտական ասպարէզին մէջ, կատարեալ փորձառական մէք: Բնութիւնը իր միակ մատեանն էր: Ունեցած բոլոր ծանօթութիւնները առանց գրքի հաւաքած էր: Օր մը իր սեղանին վրայ գրուած կենդանիները անդամահատած ատեն այցելուի մը ըսաւ. «Ասոնք են իմ գրքերը»:

1630ին իր մէկ կարեւոր գրութեան մէջ կը գրէ թէ «հիմա՝ կ'ուսանիմ քիմիաբանութիւնն ու անյամապնդութիւնը միատեղ, եւ ամէն օր բաներ կը սորվիմ՝ զորս տակէ առաջ գրքերու մէջ գտած չէի»:

Առարկայական մեթոտը ալ աւելի զարգացնելով, իր ուսուցման միջոց ընտրած էր: Սա հետեւեալ չորս սկզբունքները իր դասաւանդութեան քայլերն էին: Նախ՝ դասի մը որ եւ է մէկ ճշմարտութիւնը կը պահանջէ յստակ եւ սրտչ ըմբռնում՝ զուրկ ամէն մթնաշաղու մէ եւ տարակոյս: Բ. գիտութեան առարկաները բռնական շարքերու եւ խումբերու մէջ գտնուելով, զանոնք մէկիկ մէկիկ գատելու եւ յետոյ քննելու է: Գ. այս բաժանումներու խուզարկումը պէտք է սկսի՝ պարզերէն եւ հետզհետէ երթայ բազադերեալին: Դ. գիտութիւն կազմելու համար այս ինքնուրոյն մասերուն ներքին կապակցութիւնները եւ յարաբերութիւնները կատարելապէս ըմբռնել պէտք է:

Տեքարդը նաեւ նշանաւոր մաթեմատիքագէտ մ'էր: Ալճէպրայի մէջ կարողութեանց ցուցիչներու հեղինակը ինք թէեւ չեղաւ, բայց զանոնք դրութեան վերածեց: A b c ժի առաջին գրերը ծանօթ եւ վերջինները անծանօթ սեպելու սովորութիւնը ինք դրաւ:

Տեքարդի սարվեցուցած գիտութիւնը կը ձգտէր առաջնորդելու միտքը որ ճշմարիտ ու առողջ դատութիւն կազմէ այն բաներուն վրայ որոնք իր առջեւ կը ներկայանային եւ կամ պիտի ներկայանային: Իր գիտութիւնը՝ մտքին համար էր եւ չէ թէ միտքը՝ գիտութեան համար, ինչպէս ամբողջ Միջին Դարը կ'ըմբռնէր:

Իր կեանքովը կը ներշնչէր մարդերը որ անկեղծ յարգանք տած են հինին հանդէպ: Յախուռն յարձակումը՝ նախապաշարումներու վրայ, կ'ուղարկուէր ու գգուրտող վարմունք մը՝ ընդունուած ու հաստատուած վարդապետութիւններու եւ սովորութիւններու ընդդէմ, անխահեմութիւն կը համարէր, անոհեմութիւն մը որ փափաքուած արդիւնքը չգոյացնելէն ի դատ կորսնցնող հակադրեցութիւն մը կը ծնի:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴԹՈՎԵԱՆԵՐԸ

Անգլիական կառավարութիւնն ալ չորս հատ ընդծովեաներ ունեցաւ: 1900 Յունիսի մէջ սկսաւ ասոնց շինութիւնը որ յանձնուած Վիքթոր-Մաքսիմ տան: Անգլիացիք փոխանակ զատ գործարան մը հաստատելու եւ հոն շինել տալու իրենց ընդծովեա:

ները — ինչպէս ֆրանսական կառավարութիւնը ըրաւ՝ իր ծրագիրները գաղտնի պահելու համար — սովորական առարկայի մը պէս անոնց պատրաստութիւնը յանձնեցին անհատական ճարտարագէտի մը՝ Պրն. Հոլանտի, որ ասկէ առաջ Ամերիկայի համար ալ ընդծովեաներ շինեց :

Ընդծովեաներուն գաղտնիքը կը կայանայ սա խնդիրին մէջ . այսինքն , գտնել անանկ շարժիչ մեքենայ մը որ շատ քիչ տեղ բռնէ եւ կարելի եղածին չափ երկար ատեն ռանի ու խիստ շատ ոյժ մը արտագրէ : Ֆրանսացի երկրաշափները ելեքտրականութիւնը ընտրեցին իրր այդ շարժիչ ոյժը . բայց ասոր անպատեհութիւնը երկար ատեն չկարենալ տեսնելն է . ելեքտրական ամբարիչները մինչեւ աստիճան մը կրնան գործել , կը պարպուին , անկէ վերջը ընդծովեային կացութիւնը շատ տապալակեցուցիչ կը դառնայ եթէ փութով օդնութեան չհասնուի : Իրա՛ւ , նաւահանգիստին մէջ , նախափորձերու ատեն ամէն բան յաջող կ'երթայ , բայց պատերազմի ժամանակ , երբ ընդծովեաները նաւախուժութիւն հեռանալով մինակնին կը մտնեն թշնամիին շրջանակին մէջ , պէտք է որ կարողանան ինքզինքնուն բաւել մինչեւ որոշեալ ատեն մը : — Միւս կողմէ , ելեքտրականութեամբ շարժող ընդծովեաները չեն կրնար պէտք եղածին չափ մեծ ըլլալ , եթէ ոչ շատ դանդաղաշարժ կ'ըլլան եւ իրենց անդեցութեան շրջանակը խիստ սահմանափակ :

Մը . Հոլանտի պատրաստած չորս ընդծովեաներու մէջ երկու շարժիչ մեքենայ կայ . մին շոգեշարժ է եւ նաւը ջուրին երեսէն գացած ժամանակը կը բանի , միւսը ելեքտրաշարժ է եւ նաւուն ընկղմած ժամանակը կը գործէ : Շոգեշարժ մեքենային համար պէտք եղած շոգին յառաջ կուգայ ջուրը կազօլինով տաքցնելով՝ փոխանակ հանքածուխի . այս կերպով ծխանի պէտք չմնար : Երբ ընդծովեան ջուրին երեսէն կը յառաջանայ , կազօլինով շարժող մեքենան միեւնոյն ժամանակ ելեքտրականութիւն ալ յառաջ կը բերէ , որով միշտ ելեքտրական ոյժը կը նորոգուի . կազօլինի պակասութիւնը՝ մեքենային մէջէն անցնելէ անմիջապէս ետքը դուրս արտաքսուելու պէտք ունենալն է , ապա թէ ոչ վտանգաւոր կը դառնայ . ասոր համար է որ նաւերը ջուրին տակ մխրձած ատեն ելեքտրականութիւն գործածել հարկ կ'ըլլայ :

Անգլիական վերջին ընդծովեաներէ իւրաքանչիւրը 150 թօնո տարողութիւն ունի , երկայնութիւնը քսան մէդր է իսկ լայնքը երեքուկէս մէդր : Կազօլինով մեքենան 160 ձիու զօրութիւն ունի իսկ ելեքտրաշարժը՝ 75 ձիու : Ջուրին տակէն ունեցած արագութիւնը 8 հանգոյց է , որով իր գտնուած տեղէն մինչեւ 400 մղոն

հեռու եզրող մարտանաւերու համար կրնայ վտանգաւոր ըլլալ :

* *

Ֆրանսական Գիտական Կաճառի վերջին նիստին մէջ Տօքթ. Վիտալ տեղեկագիր մը կարդաց որով կը պարզէր փոթորիկներու ժամանակ արձակուած հրթիռներու ազդեցութիւնը : Արդէն Իտալիոյ մէջ փորձեր կատարած էին թնդանօթի հարուածներով կարկուտին գալը արգելելու՝ զայն արտադրող ամպերը ցրուելով : — Հրթիռներով կատարուած փորձերուն մէջ տեսնուեցաւ որ չէ թէ միայն կարկուտը կ'արգելուի, հապա նաեւ կոյծակ չկազմուիր : Տօքթ. Վիտալ կը յայտնէ որ նոր փորձեր պիտի կատարուին հրթիռի տեղ ֆէքսանէ Ֆիօքենկի արձակելով, որոնք ամպին մէջն իսկ պայթելով կարող են մինչեւ 400 մէդր բարձրէն եկող փոթորիկ մը արգելել :

* *

Ի՞նչ կը կարծէք որ եղած ըլլայ Բըլէ լեռան հրաբուխը : Պրն. Ժիրօ, որ Ֆրանսական Գիտական Կաճառին կողմէ անոր հսկողը կարգուած է, լուր կուտայ թէ այս պահուս Բըլէ լեռը հրաբորոք վիճակ մը ունի : Ահագին ասեղը որ խառնարանին մէջ բարձրացած է՝ լավաներու ազդեցութեան տակ, տակաւին կանգուն կը մնայ . 300 մէդր բարձրութիւն ունի սա, որու ստորոտի ճեղքուածքներէն շոգիներ ու կազեր դուրս կը պոռթկան. միեւնոյն ճեղքուածքներէն կարելի է տեսնել հրաչէկ լավան որ դուրս կը խուժէ : Այս ասեղը, ըսենք կոթողը, միշտ գազաթին կողմէ կը փոխի, եւ խարխիսին կողմէ նոր կոյտեր կազմուելով միշտ կը բարձրանայ : Սէն Բիէրի հողը տակաւին կը տատանի. քիչ շատ տարի մը կ'ըլլայ որ այս բնական աղէտը կը տեւէ եւ դադրելիք ալ չունի :

Հանրագիտակի 20րդ թիւին մէջ հրատարակուած նկարհանելուկը լուծեցին՝

Պարոնայք՝ Ստեփան Յ. Պալլապաշեան, Հայրապետ Հայրապետեան աշակ. Քէօթաճեայի ազգ. վարժարանի. — Պ. Երուանդ Նալպանտեան՝ լուսանկարիչ Թօթանի. — Պ. Արմենակ Պ. Մանուկեան՝ Էրպ'աւ :

23րդ թիւին մէջ եղած Մտամարզային հարցումներու լուծումը

1. — Մարդուն ոտքերը՝ անիւին շառաւիղներուն դերը կը կատարեն, սա տարբերութեամբ որ առջի դիրքը առնելու համար փոխանակ ամբողջ շրջանակ մը գծելու՝ մինակ աղեղ մը կը մեւացնեն եւ յաջորդաբար իրարու առջեւ կուգան :

2. — Որովհետեւ քաղին պարապ ծակերուն մէջ ջուր կամ օդ լեցուած է, արդ ջերմութեամբ ցուրը կը շոգիանայ, օդը կ'ընդլայնի եւ քաղը կը ճաթի :

3. — Ձեռնոց :

ՄՏԱՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1

Ելե եմ ես քափառական,

Պըսըսելով ի մեջ աւան,

Հանգչելով ի վերայ գետնոյն:

Մեռնելով ի սակ արեւոյն:

Իմ ընկերս ե առարկայ,

Ամեն քաղաք անոր քաղաք կայ:

Եթե երկուքնս մեկ ըլլանք,

Կերակուրի մը պէտք կ'ըլլանք:

Գիտցեք թե ի՞նչ ենք մեք:

ԹՈՒԱԽԱՂԵՐ

1. — Ի՞նչ է այն թիւը՝ որու վրայ իր խորանարդը ձգում-
րելով 778780 կ'ընդունինք: (Լուծումը միասեղ):

2. — Ճգնաւոր մը որ մինչեւ 50 համրել գիտէ եղեր՝ իր ճշգ-
նարանին մէջէն աման մը ոսկի կը գտնէ, ոսկիները 41-ական
համրելով կը տեսնէ որ 37 կ'աւելնայ, 43-ական համրելով 3 կ'
աւելնայ, 47-ական ալ համրելով 27 կ'աւելնայ: Հիմա իմանալ կ'ու-
զենք թէ՛ քանի՞ ոսկի էր: (Իր նկարագրած ամանէն ալ կը հասկը-
ուի թէ՛ 100,000 ոսկիէն պակաս է: (Լուծման բացատրութիւնն ալ
միասին):

Ատարազար

ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Ուրիշ երկու թուախաղերն մինչեւ Օգոստոս 1, առաջին անգամ
ճիշդ լուծողին մէկ օրինակ Տրեգեմենեանի Համարակալութիւն նուէր
կը խոստանայ հեղինակը:

Հանրագիտակի յաջորդ թիւը պիտի յափառուայ Առաջնորդ Վանա-
ռակալացի (24 երես):

Հանրագիտակի ներկայ թիւով կը լրանայ տարւոյս առաջին
վեցամսեայն, ուստի կը խնդրենք այն բաժանորդներէն որ մինչև
ցայժմ չեն վճարած իրենց բաժնեգինը՝ բարեհաճին վճարել:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի Տատտէսի, Երև 38, Մանգումէի տպարանին կից

02

2. 2000

1950

ପ୍ରକାଶନ କ୍ଷମା କ୍ଷମା କ୍ଷମା

[illegible][illegible]

លីយ៉ា តុល្យឫស្សី លីយ៉ា តុល្យឫស្សី លីយ៉ា តុល្យឫស្សី លីយ៉ា តុល្យឫស្សី

ឧបករណ៍ រូបវន្ត

[illegible]

1. *Chlorophyll*

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

Ն Ի

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 տարբ ցոս առնել ուզողը պէտք է վճարէ 12 շրուշ:

Բ Ի Ի Ր Ա Կ Ն

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Տարեգլխէն սկսեալ բնդարձակուած կը հրատարակուի, ամէն անգամ, երբ ու շահեկան բովանդակութեամբ մը, պարունակելով գեղեցիկ յօդուածներ, ստորագրուած կարող գրիչներէ:

Բիւրակն իր ուղղութեամբը եւ բովանդանութեամբը կը ներկայացնէ լուրջ հրատարակութիւն մը արժանի ընթերցանութեան՝ ամէն դասակարգի անձեռու համար:

ՀԱՍՑԷ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճաստէսի, Բաբիս ԿԵ. խան, Թ. 38, Բիւրակնի տարագրութիւն:

40րդ հրատարակութիւն Դարեան Գործակալութեան

ՈՒՂԵՑՈՅՑ Գ- ՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Դասասուններու եւ իննագարգացման փախստողներու համար անհրաժեշտ գիրք:

Դիմել ՍՄՐԱՏ ԴՆԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ,

Կ. Պոլիս, Սիրքէճի, Խորասանճեան խան